ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «20» մայիսի 2011 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 15 Ա/Ք

ՀՀ պետական բյուջեից միջազգային գիտական համագործակցությանը հատկացված միջոցների շրջանակներում անցկացված «ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2011» մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցների ցանկը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի (ՀՀԲՀՀ) միջև 2010 թվականի նոյեմբերի 4-ին կնքված «Համագործակցության մասին» համաձայնագրով, հիմք ընդունելով ԳՊԿ և ՀՀԲՀՀ համատեղ ֆինանսավորմամբ անցկացվող գիտական ծրագրերի աջակցության «ԳՊԿ–ՀՀԲՀ-2011» մրցույթը կազմակերպելու մասին ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի 2011 թ. փետրվարի 1-ի N 07-Ա/Ք հրամանը, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի 2011 թ. մարտի 16-ի N 09-Ա/Ք հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհուրդների եզրակացությունները և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական գործունեության կազմակերպման վարչությանը՝ 15 - օրյա ժամկետում մրցույթի արդյունքների մասին տեղեկացնել գիտական թեմաների հայտերի ղեկավարներին:

3. Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2011 թ. հուլիսի 1-ից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը և գիտական թեմաների ցանկում կատարվող փոփոխությունների լիազորությունը վերապահել ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ